



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՏՏՈՒԱԿԱՏԱՐ  
Ո. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«26 07 2021թ.



## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆԱՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0135-21

Ձեռնարկողը՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ք. Երևան, Զարենցի 1

Գործունեությունը՝

«Արագածոտն-2» միկրոռեգիոնալ մակարդակի  
համակցված փարածական պլանավորման փաստաթղթի  
շրջակա միջավայրի վրա ազդեցության ուազմավարական  
գնահատման հաշվեդումների մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պարտականությունները կատարող՝

Խ. Մարտիրոսյան



# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 0135-21

<<26>>07 2021թ.

**«ԱՐԱԳԱԾՈՏՆ-2» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվեդրվություն**

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրույթային փաստաթուղթ.

- ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՈԷԳ) հաշվետվություն,  
գծագրական նյութեր

«Արագածոտն-2» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՓ) հայեցակարգային և սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակատրությամբ է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանկան խնդիրների համալիր կառավարմամբ:


Արագածոտնի մարզի (այսուհետ՝ Մարզ) «Արագածոտն-2» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը մշակվել է քաղաքաշինության կոմիտեի պատվերով՝ տեխնիկական բնութագրին համապատասխան:

**Նկարագրական մաս.** Մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևմտյան մասի հարավյայն հատվածում և հարակից է Արմավիրի, Կոտայքի, Շիրակի, Լոռու մարզերին և Երևանին:

Մարզը զբաղեցնում է 2756կմ<sup>2</sup>, իր մեջ ընդգրկում է Թալինի, Աշտարակի, Ապարանի և Արագածի տարածաշրջանները՝ բնակչությունը 125.4 հազ. մարդ:

Մարզն աչքի է ընկնում բնակլիմայական պայմանների բազմազանությամբ: Ըստ բարձրության տարեկան միջին ջերմաստիճանը և տեղումների ջանակը խիստ տարբեր են: Արագածի գագաթամերձ շրջանում տեղումները տարեկան հասնում են 850-900մմ, իսկ համեմատաբար ցածրադիր (1000մ) բարձրություններում՝ 300մմ: Արարատյան դաշտավայրին հարող հատվածներում ամռանը տաք է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ:

Տարածքշրջանի խոշոր գետերն են Քասախը և Գեղաձորը, մարզի տարածքով է անցնում Արզնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը: Մարզն աչքի է ընկնում ջրամբարների առատությամբ, գործում են Ապարանի, Հալավարի, Շիլքարի և Աղավանի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կաքավածորի, Շենիկի Աշխարհ



Սարունչի ջրամբարները: Մարզի ստորերկրյա ջրային պաշարները գոյանում են Արագած լեռն ծնահալոցքից, տեղումներից և բնական աղբյուրներից:

Մարզի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով՝ տարածված են հատկապես շինանյութերը՝ տուֆը, բազալտը, կրաքարը, կավահողը, խարամը, պեմզան և պեղիտը, ինչպես նաև որոշ քանակությամբ մետաղական հանածոներ:

Մարզի հարավում լեռնալանջերը ձուլվում են Արարատյան դաշտին, իյուսիսում ձգվում են մինչև Արագածի լեռնագագարը: Մարզը << այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները (950 մ-ից մինչև 4090 մ բացարձակ բարձրությունները): Այստեղ են գտնվում Հայաստանի Հանրապետության ամենաբարձր գագաթ Արագածը (4090 մ) և Ծաղկասար (2219 մ), Իրինդ (2050 մ), Արտենի (2047 մ) հանգած հրաբուխները: Մարզի ռելիեֆը գրավիչ է ինչպես դահուկային սպորտի այնպես էլ լեռնագնացների համար: Մարզի տարածքի մեծ մասը գրաղեցնում են լեռնային սևահողերը՝ ծածկված տափաստանային բուսականությամբ: Բարձր լեռնային մասերում, լեռնամարգագետնային հողերի վրա տարածվում են մերձալպյան և ալպյան մարգագետիններ, որոնք հաճախ ընդմիջվում են քառապատկերներով ու լերկ ժայռերով: Արագածոտնի մարզում աճում է հաճարենի, կաղնի, բոխի, սոճի, լորենի, կեչի, թեղի, հացենի և այլն: Այստեղ հատկապես առատ են մշակաբույսերի վայրի ազգակիցները՝ ցորենը, աշորան, գարին, վարսակը, ոլոռը, ճակնդեղը, զանգզան հատապտուղներ, կորիզավոր, ունդավոր, կերային, բանջարանոցային բուսատեսակներ և այլն: Մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները:

Բնության հատուկ պահպանվող տարածքներից է «Արագածի ալպյան» արգելավայրը և 23 բնության հուշարձաններ: Տարածաշրջանում հայտնի են << բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված բազմաթիվ տեսակներ:

«Արագածոտն-2» միկրոռեգիոնն ընդգրկող տարածքը գտնվում է մարզի միջնամասում, որտեղ տեղակայված է մարզկենտրոն Աշտարակը: Տարածքը կազմում է 22296.32հա: Այն ներառում է մեկ քաղաք և ութ գյուղ՝ Աշտարակ քաղաք, Արտաշավան, Բազմադրյուր, Կարբի, Ղազարավան, Ուշի, Սաղմոսավան, Փարպի և Օհանավան համայնքներ: Բնակչության թիվը կազմում է 30.92 հազ.մարդ:

«Արագածոտն-2» տարածաշրջանի ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է 22296.32հա տարածք, այդ թվում՝

- գյուղատնտեսական հողեր – 17192.9հա,
- բնակավայրերի հողեր – 3328.49հա
- արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր – 267.12հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմուն. հողեր – 124.33հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր – 351.26հա,
- հատուկ նշանակության հողեր – 74.06հա,
- անտառային հողեր – 811.11հա,
- ջրային հողեր – 147.05հա:

Հեռանկարային զարգացման շրջանակներում համայնքների հողային ֆոնդի՝ նպատակային և գործառնական նշանակության փոփոխությունները՝ ներկա վիճակում և հեռանկարում ունենալու են հետևյալ բաշխվածությունը.

### Աշտարակ քաղաք

- բնակավայրի հողեր՝ 1186.17հա, հեռանկարում՝ 1186.32հա, որից բնակելի կառուցապատման՝ 645.69հա, հեռանկարում՝ 646.92հա, հասարակական կառուցապատման՝ 199.96հա, հեռանկարում չի փոխվելու, ընդհանուր օգտագործման համար



տարածքներ՝ 203.8հա, խառը կառուցապատման՝ 1.55հա, հեռանկարում չեն փոխվելու, այլ հողեր՝ 135.32հա, հեռանկարում՝ 134.09 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 122.02հա, այդ թվում՝ արդյունաբերական օբյեկտներ՝ 87.88հա, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ՝ 12.79հա, պահեստարաններ՝ 5.55հա, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 15.8հա հեռանկարում չեն փոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 61.12հա, այդ թվում կոմունալ ենթակառուցվածքների՝ 6.22հա, էներգետիկակայի՝ 1.44հա, տրանսպորտի՝ 53.14հա, կապի՝ 0.32հա, հեռանկարում չեն փոփոխվելու,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 48.01հա, որից պատմության և մշակույթի 41.76հա, հատուկ նշանակության հողեր՝ 70.41հա, հանգստի համար նախատեսված՝ 3.2հա, բնապահպանական՝ 3.23հա, հեռանկարում չեն փոփոխվելու,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2720.16հա, որից վարելահող 854.77հա, բազմամյա տնկարկներ՝ 587.59հա, արոտավայրերը՝ 948.71հա, այլ հողատեսքերը՝ 329.09հա հեռանկարում չեն փոփոխվելու,

- անտառային հողեր՝ 8.71հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- ջրային հողեր՝ 17.05հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- համայնքի հողերի ընդհանուր մակերոսը՝ 4233.8հա:

**Արտաշավան համայնք՝** Նախատեսվում է գյուղատնտեսական /արոտավայր/ և բնակվայրերի /այլ հողեր/ հողահատվածներից՝ բնակելի տնամերձ և հասարակական կառուցապատման օգտագործման համար փոփոխություն.

- բնակավայրի հողեր՝ 446.23հա, հեռանկարում 447.90հա, որից բնակելի կառուցապատման՝ 400.71հա, հեռանկարում 401.76հա, հասարակական կառուցապատման՝ 12.25հա, հեռանկարում՝ 12.95հա, խառը կառուցապատման՝ 1.68հա, ընդհանուր օգտագործման՝ 23.70հա, հեռանկարում չեն փոփոխվելու, այլ հողեր՝ 7.89հա, հեռանկարում՝ 7.81հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 3234.32հա, հեռանկարում՝ 3232.65հա, որից վարելահող 335.93հա, բազմամյա տնկարկներ՝ 9.20հա, խոտհարքեր՝ 149.00հա, հեռանկարում չեն փոփոխվելու, արոտավայրերը՝ 2626.31հա, հեռանկարում՝ 2624.64հա, այլ հողատեսքերը՝ 113.88հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 13.20հա, որից արդյունաբերական՝ 0.6հա, գյուղարտադրական՝ 12.6հա, հեռանկարում՝ չեն փոփոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 15.93հա, այդ թվում էներգետիկակայի՝ 0.3հա, տրանսպորտի՝ 15.62հա, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.01հա, հեռանկարում՝ չեն փոփոխվելու,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2.80հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- պատմամշակութային հողեր՝ 26.47հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- անտառային հողեր՝ 0հա,

- ջրային հողեր՝ 6.39հա, հեռանկարում չի փոփոխվում,

- համայնքի հողերի ընդհանուր մակերոսը՝ 3745.34հա:

### **Բազմադրյուր համայնք՝**

- բնակավայրի հողեր՝ 97.72հա, հեռանկարում՝ 97.61հա, որից բնակելի կառուցապատման՝ 77.89հա, հեռանկարում՝ 77.78հա, հասարակական կառուցապատման՝



2.25հա, խառը կառուցապատման՝ 0.03հա, ընդհանուր օգտագործման՝ 15.69հա, այլ հողեր՝ 1.86հա, հեռանկարում փոփոխություններ չկան,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 747.76հա, հեռանկարում՝ 746.82հա, որից վարելահող՝ 36.13հա, բազմամյա տնկարկներ՝ 81.96հա, արոտավայրերը՝ 485.47հա, խոտհարքեր՝ 20.01հա, հեռանկարում չեն փոփոխվելու, այլ հողատեսքերը՝ 124.19հա, հեռանկարում՝ 123.25հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 4.21հա, հեռանկարում՝ 4.32հա, որից՝ գյուղարտադրական՝ 4.13հա հեռանկարում՝ 4.24հա, արդյունաբերական օբյեկտների՝ 0.8հա, հեռանկարում փոփոխություն չկա,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 1.86հա, այդ թվում էներգետիկայի՝ 0.03հա, կոմունալ ենթակառուցվածքների՝ 1.83հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 59.11հա, հեռանկարում՝ 60.05հա, հանգստի համար նախատեսված՝ Օհա, առաջնահերթ՝ 0.37հա, հեռանկարում՝ 0.94հա,

- պատմական և մշակութային հողեր՝ 59.11հա,

- անտառային հողեր՝ 635.38հա,

- ջրային հողեր՝ 3.79հա, հեռանկարում՝ չեն փոխվելու,

- համայնքի հողերի ընդհանուր մակերոսը՝ 1549.83հա:

**Կարբի համայնք՝** Նախատեսվում է գյուղատնտեսական ներկայումս վերացած և պտղատու այգի/ և բնակավայրերի /այլ հողեր/ հողահատվածներից՝ բնակելի տնամերձ և հասարակական կառուցապատման, ինչպես նաև գյուղարտադրական և արտադրական օգտագործման համար փոփոխություն.

- բնակավայրի հողեր՝ 358.28հա, հեռանկարում՝ 365.29հա, որից բնակելի կառուցապատման՝ 250.96հա, հեռանկարում՝ 256.36հա, հասարակական կառուցապատման՝ 3.84հա, հեռանկարում՝ 5.76հա, ընդհանուր օգտագործման՝ 36.84հա, հեռանկարում չի փոխվում, այլ հողեր՝ 66.64հա, հեռանկարում՝ 66.33հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1852.83հա, հեռանկարում՝ 1849.05հա, որից բազմամյա տնկարկներ՝ 483.79հա, հեռանկարում՝ 483.79հա, վարելահող՝ 537.85հա, խոտհարքեր՝ 15.5հա, հեռանկարում՝ 15.51հա, արոտավայրերը՝ 479.29հա, հեռանկարում՝ 476.43հա, այլ հողատեսքերը՝ 336.39հա, հեռանկարում՝ 335.47հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 28.30հա, հեռանկարում՝ 25.07հա, որից արդյունաբերական՝ 4.34հա, գյուղարտադրական արտադրական՝ 17.3հա, հեռանկարում՝ 14.07հա, պահեստարաններ՝ 5.35հա, ընդերքի օգտագործման՝ 1.31հա, հեռանկարում չեն փոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 8.78հա, այդ թվում, էներգետիկայի՝ 0.46հա, կապի՝ 0.08հա, տրանսպորտի՝ 2.81հա, կոմունալ ենթակառուցվածքների՝ 5.43հա, հեռանկարում՝ փոփոխություններ չկան,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 16.45հա,

- անտառային հողեր՝ 13.56հա,

- ջրային հողեր՝ 19.12հա, հեռանկարում՝ չի փոխվում,

- համայնքի հողերի ընդհանուր մակերեսը՝ 2297.32հա:

**Ղազարավան համայնք՝** Նախատեսվում է գյուղատնտեսական /այլ հողատեսքեր/ և արդյունաբերության /գյուղատնտեսական, արտադրական/ հողահատվածներից՝ բնակելի տնամերձ և հասարակական կառուցապատման, ինչպես նաև հատուկ պահպանվող հանգստի գոտու ստեղծման համար փոփոխություն.



- բնակավայրի հողեր՝ 256.78հա, հեռանկարում՝ 259.19հա, որից բնակելի կառուցապատման՝ 168.46հա, հեռանկարում՝ 170.72հա, հասարակական կառուցապատման՝ 22.71հա, հեռանկարում՝ 22.86հա, ընդհանուր օգտագործման՝ 29.83հա, այլ հողեր՝ 35.78հա, հեռանկարում՝ փոփոխություն չկան,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1269.16հա, հեռանկարում՝ 1266.82հա, որից վարելահող 119.12հա, արոտավայրեր՝ 513.77հա, բազմամյա տնկարկներ՝ 47.90հա, խոտհարքեր՝ 12.36հա, այլ հողատեսքեր՝ 576.01հա, հեռանկարում՝ 573.67հա,

- արդյունաբերության, ընդերջօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 8.28հա, հեռանկարում՝ 7.58հա, որից արդյունաբերական՝ 1.5հա, գյուղարտադրական արտադրական՝ 6.32հա, հեռանկարում՝ 5.62հա, ընդերջի օգտագործման 0.46հա, հեռանկարում չի փոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 5.89հա, այդ թվում կոմունալ ենթակառուցվածքների՝ 5.89հա, հեռանկարում՝ չի փոխվելու,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 51.57հա, հեռանկարում՝ 52.20հա, որից պատմության և մշակույթի 51.57հա, հանգստի համար նախատեսված հողեր՝ 0հա, հեռանկարում՝ 0.63հա,

- ջրային հողեր՝ 34.41հա, հեռանկարում՝ չի փոխվելու,

- համայնքի հողերի ընդհանուր մակերոսը՝ 1626.09հա:

**Ուշի համայնք՝** Նախատեսվում է գյուղատնտեսական /ներկայումս վերացած վարելահող և պտղատու այգի/ և բնակավայրի /այլ հողեր/ հողահատվածներից՝ բնակելի տնամերձ և հասարակական կառուցապատման, ինչպես նաև գյուղատնտեսական և արտադրական օգտագործման համար փոփոխություն.

- բնակավայրի հողեր՝ 183.69հա, հեռանկարում՝ 184.32հա, որից բնակելի կառուցապատման՝ 149.15հա, հեռանկարում՝ 150.53հա, հասարակական կառուցապատման՝ 2.28հա, ընդհանուր օգտագործման՝ 21.16հա, հեռանկարում՝ 21.24հա, այլ հողեր՝ 11.10հա, հեռանկարում՝ 10.27հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 4160.53հա, հեռանկարում՝ 4159.83հա, որից վարելահող 199.09հա, արոտավայրեր՝ 2563.83հա, հեռանկարում՝ 2563.77հա, բազմամյա տնկարկներ՝ 48.41հա, խոտհարքեր՝ 308.00հա, հեռանկարում՝ 307.36հա, այլ հողատեսքեր՝ 1041.20հա, հեռանկարում՝ չի փոխվում,

- արդյունաբերության, ընդերջօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ՝ 14.03հա, հեռանկարում՝ 13.47հա, որից պահեստարաններ՝ 0.03հա,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 6.95հա, հեռանկարում՝ 7.58հա, այդ թվում էներգետիկայի՝ 0.04հա, տրանսպորտի՝ 6.77հա, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.14հա, հեռանկարում՝ 0.77հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 26.25հա, որից պատմության և մշակույթի 26.25հա,

- ջրային հողեր՝ 14.16հա, հեռանկարում՝ չի փոխվելու,

- համայնքի հողերի ընդհանուր մակերոսը՝ 4405.64հա:

**Սաղմոսավան համայնք՝** Նախատեսվում է գյուղատնտեսական /արոտավայրից/, բնակավայրերի այլ հողերից տնամերձ և հասարակական կառուցապատման օգտագործման համար փոփոխություն.

- բնակավայրի հողեր՝ 89.16հա, հեռանկարում՝ 89.75հա, որից բնակելի կառուցապատման՝ 78.16հա, հեռանկարում՝ 80.17հա, հասարակական կառուցապատման՝



1.66հա, հեռանկարում՝ 2.25հա, ընդհանուր օգտագործման՝ 5.28հա, հեռանկարում չի փոխվում, այլ հողեր՝ 4.06հա, հեռանկարում՝ 2.05հա,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 340.83հա, հեռանկարում՝ 340.24հա, որից բազմամյա տնկարկներ՝ 6.20հա, վարելահող՝ 102.10հա, խոտհարքեր՝ 9.19հա, արոտավայրերը՝ 141.92հա, հեռանկարում՝ 141.33հա, այլ հողատեսքերը՝ 81.42հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ Օհա,

- Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 0.10հա, այդ թվում, կապի՝ 0.02հա, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.08հա, հեռանկարում փոփոխություններ չկան,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 6.71հա,

- անտառային հողեր՝ 84.82հա,

- ջրային հողեր՝ 10.15հա, հեռանկարում՝ չեն փոխվում,

- համայնքի հողերի ընդհանուր մակերեսը՝ 531.77հա:

**Փարպի համայնք՝** Նախատեսվում է տարբեր անօգտագործելի տարածքներից հիմնականում հասարակական կառուցապատման օգտագործման համար փոփոխություն.

- բնակավայրի հողեր՝ 236.15հա, հեռանկարում՝ 236.91հա, որից բնակելի կառուցապատման՝ 177.36հա, հեռանկարում՝ 179.85հա, հասարակական կառուցապատման՝ 9.72հա, հեռանկարում՝ 9.98հա, խառը կառուցապատման՝ 0.44հա, հեռանկարում՝ 0.94հա, ընդհանուր օգտագործման՝ 33.37հա, հեռանկարում 30.88հա, այլ հողեր՝ 15.26հա, հեռանկարում՝ չի փոխվում,

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 521.74հա, հեռանկարում՝ 516.94հա, որից բազմամյա տնկարկներ՝ 80.02հա, վարելահող՝ 282.19հա, հեռանկարում՝ 280.80հա, խոտհարքեր՝ 26.30հա, հեռանկարում՝ 26.08հա, արոտավայրերը՝ 79.61հա, հեռանկարում՝ 76.42հա, այլ հողատեսքերը՝ 53.62հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 42.45հա, հեռանկարում՝ 44.88հա, այդ թվում՝ արդյունաբերական օբյեկտների՝ 5.3հա, հեռանկարում՝ 7.63հա, գյուղատնտեսական արտադրական՝ 20.0հա, հեռանկարում՝ 20.10հա, պահեստարաններ՝ 2.12հա, ընդերքի օգտագործման՝ 15.03հա, հեռանկարում չեն փոխվում,

- Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 16.63հա, այդ թվում, Էներգետիկայի՝ 0.06հա, կապի՝ 0.05հա, տրանսպորտի՝ 16.09հա, կոմունալ ենթակառուցվածքների՝ 0.43հա, հեռանկարում՝ փոփոխություններ չկան,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 54.31հա, հեռանկարում՝ 55.92հա, այդ թվում՝ հանգստի համար նախատեսված՝ 5.35հա, հեռանկարում՝ 6.96հա, պատմական և մշակութային՝ 48.96հա, հեռանկարում՝ չեն փոխվում,

- ջրային հողեր՝ 21.28հա, հեռանկարում՝ չեն փոխվում,

- համայնքի հողերի ընդհանուր մակերեսը՝ 892.56հա:

**Օհանավան համայնք՝** Նախատեսվում է տարբեր անօգտագործելի տարածքներից հիմնականում հասարակական և տնամերձ կառուցապատման օգտագործման համար փոփոխություն.

- բնակավայրի հողեր՝ 474.14հա, հեռանկարում՝ 479.21հա, որից բնակելի կառուցապատման՝ 385.72հա, հեռանկարում՝ 390.55հա, հասարակական կառուցապատման՝ 15.52հա, հեռանկարում՝ 15.76հա, ընդհանուր օգտագործման՝ 30.50հա, այլ հողեր՝ 42.40հա, հեռանկարում՝ չի փոխվում,



- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 2345.57հա, հեռանկարում՝ 2335.40հա, որից բազմամյա տնկարկներ՝ 419.18հա, վարելահող՝ 370.39հա, խոտհարքեր՝ 16.46հա, արտավայրերը՝ 950.39հա, հեռանկարում՝ 945.48հա, այլ հողատեսքերը՝ 589.15հա, հեռանկարում՝ 583.89հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 34.60հա, հեռանկարում՝ 34.44հա, այդ թվում՝ արդյունաբերական օբյեկտների՝ 5.85հա, գյուղատնտեսական արտադրական՝ 14.20հա, հեռանկարում՝ 14.04հա, ընդերքի օգտագործման՝ 14.55հա, հեռանկարում չի փոխվում,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր՝ 7.07հա, հեռանկարում՝ 12.08հա, այդ թվում, էներգետիկայի՝ 1.58հա, հեռանկարում՝ 6.59հա, տրանսպորտի՝ 5.49հա,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 62.38հա, հեռանկարում՝ 62.63հա, այդ թվում՝ հանգստի համար նախատեսված՝ Օհա, հեռանկարում՝ 0.25հա, պատմական և մշակութային՝ 62.38հա, հատուկ նշանակության՝ 0.85հա, հեռանկարում՝ չեն փոխվում,

- ջրային հողեր՝ 20.70հա, հեռանկարում՝ չի փոխվում,

- անտառային հողեր՝ 68.64հա,

- համայնքի հողերի ընդհանուր մակերեսը՝ 3013.95հա:

Տարածաշրջանը գտնվում է գյուղատնտեսական ակտիվ օգտագործման (վարելահող, բազմամյա տնկարկ) տարածքների շարքում, որտեղ գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ 218,218.8հա է (կամ մարզի տարածքի շուրջ 79.2%), այդ թվում՝ վարելահողեր՝ 54,105.7հա: Բնակավայրերի հողերը կազմում են մարզի հողերի շուրջ 6.3%, իսկ անտառային հողերը՝ շուրջ 3.95%:

Համաձայն ներկայացված հաշվետվության՝ «ԱՐԱԳԱԾՈՏՆ-2» միկրոնեգիոնում անտառային հողերը կազմում են 811,1հա: Անտառի անկանոն օգտագործումը էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Համաձայն հաշվետվության բնակչության իմնական գբաղմունքն է՝ գինեգործությունը, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակությունը, հողագործությունը:

Գյուղական բնակավայրերի ջրամատակարարումը կարգավորված չէ, քանի որ բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է տեղական աղբյուրներից: Ոռոգման, ինչպես միջտնտեսային, այնպես էլ ներտնտեսային համակարգերը գտնվում են քայլայված վիճակում, որտեղ ջրի կորուստները գերազանցում են նորմերը:

Աշտարակ քաղաքը սնող ջրամատակարարման համակարգերում խմելու ջուրը ենթարկվում է կանխարգելիչ վարակագերծման: Ջրամատակարարման համակարգերի գլխամասային կառույցների սանհիտարահիգիենիկ տեխնիկական վիճակն անբավարար է: Քաղաքը սնող ջրաղբյուրներից՝ «Կարբի» խորհային հորը չունի սանհիտարական պահպանման գոտի: «Արտակ», «Սաղմոսավանք», «Արտաշավան» կապտաժները կարիք ունեն վերանորոգման: Բոլոր ՕԿՁ-ների սան պահպանման գոտիների տարածքներում բացակայում են տարածքի լուսավորումը և շուրջօրյա պահակային ծառայությունը:

Աշտարակ քաղաքը ներկայում կոյուղացված է ոչ լրիվ: Քաղաքի աջ ափի ամբողջ, իսկ ձախ ափի որոշ թաղամասերի կոմունալ-կենցաղային և հասարակական շենքերի կեղտացրերը՝ առանց մաքրման և վարակագերծման, թափվում են Քասախ գետը:

Գործող կոյուղու սանհիտարա-տեխնիկական վիճակն անբավարար է: Կոյուղու համակարգի քայլայված վիճակի հետևանքով հաճախակի արձանագրվում են ներցանցային



Վթարներ: Կոյուղու կոլեկտորը, ինչպես նաև քաղաքային ցանցը կարիք ունեն հիմնանորոգման:

«Արագածոտն-2»-ում ջրամատակարարումը կատարվում է Աշտարակ, Արտաշավան, Բազմադրյուր, Կարբի, Ղազարավան, Ուշի, Սաղմոսավան, Փարպի և Օհանավան բնակավայրերում:

«Արագածոտն-2»-ի տարածքում հեղեղատար կոյուղին հեղեղումներից պաշտպանության ինժեներական միջոցներից մեկն է: Հեղեղատար կոյուղու ստեղծումը նպատակ ունի անձրևի և ջան հալոցքի ընթացքում տարածքի հատվածները, հողամասերը, շինությունների հիմնատակերը, ճանապարհները հնարավորինս պաշտպանել ողղողումներից:

Ներկա պայմաններում ոռոգման միջոցներ են հանդիսանում՝ խորթային հորերը և պոմպակայանները, որոնք բարոյապես և ֆիզիկապես մաշված են:

Ոռոգման համակարգում նախատեսվող կարևոր միջոցառումներն են.

- ոռոգման համակարգերի գույքագրում նորոգում, պահպանում և շահագործում,
- ջրօգտագործողների համակարգի վերջնական ձևավորում, ինքնահոս ջրամատակար արման ընդլայնում, էներգետիկ ծախսերի կրճատում, ջուր մատակարարող և օգտագործող փոխհարաբերությունների բարելավում:
- կաթլային ոռոգման համակարգերի կիրառում,
- ջրամբարների կառուցում, համայնքներում ոռոգման ջոերի վերաբերյալ առկա խնդիր ների վերանայում և լուծման ժամանակացույցի կազմում:

«Արագածոտն-2» տարածքով անցնում են «Աշնակ-1», «Աշնակ-2» 220կՎ և «Անուշ», «Բջնի» 110կՎ լարման օդային բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերը:

Համաձայն նախագծի «Արագածոտն-2» ՄՄՀՏՊ տարածքում ընդգրկված բոլոր համայնքները գազիֆիկացված են: Միկրոռեգիոնում ներառված բոլոր բնակավայրերը գազաֆիկացված են՝ գազասպառման ընդհանուր պահանջը կազմում է 20 229.03 հազ. մ<sup>3</sup>/տարի բնական գազ:

Արագածոտնի մարզն ունի զարգացած տրանսպորտային ցանց:

Տրանսպորտային կապերի ապահովածության տեսանկյունից «Արագածոտն-2»-ի տարածքը վերգետնյա և օդային ուղիներով կապված են հանրապետության տարբեր մարզերի և արտասահմանյան երկրների հետ: Միկրոռեգիոնի տարածքում միջային նշանակության U-1 և U-3 ավտոմայրությների երկարությունը կազմում է 29.13 կմ: U-1 ավտոմայրությն կապ է ապահովում Երևան-Գյումրի-Վրաստանի սահմանի հետ: U-3 ավտոմայրությն հատելով հարավից-հյուսիս ուղղությամբ կապ է ապահովում Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման:

Հանրապետական նշանակության ավտոմայրությներից տարածքում գործում են՝ <-19՝ Աշտարակ-Օշական և <-21՝ Ալավազ-Արթիկ-Հոռոմ ուղղությունները:

Մարզն ունի մեծ զբոսաշրջային ներուժ՝ պայմանավորված բնական, պատմամշակութային ժառանգության օբյեկտների և բնության տեսարժան վայրերի, ազգաբնակչության յուրահատուկ կենցաղի ու մշակույթի հետ: Արագածոտն-2» միկրոռեգիոնի տարածքում ներկայում առկա են բազմաթիվ հուշարձաններ: Դրանց թիվը կազմում է 126 հուշարձանախումբ, որոնց մեջ ներառած հուշարձանների թիվը հասնում է 430 միավորի: Բոլոր հուշարձանները մեծ հետաքրքրություն են ներկայցնում ազգային մշակույթի համար և միտված են զարգացնելու միջազգային գրոսաշրջությունը Հայաստանում:

«Արագածոտն-2» տարածաշրջանի համար զարգացման հեռանկարը կանխատեսվում է գյուղատնտեսության արտադրանքի վերամշակման և արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերության ճյուղերի զարգացմամբ:



Տարածաշրջանի համայնքներում արդյունաբերությունը հիմնականում մասնագիտացած է սննդամթերքի արտադրության՝ սննդամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ըմբելիքի արտադրություն, խաղողի վերամշակման և գինու հումքի ստացման, վերականգնվող էներգիայի ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Արդյունաբերությունը հիմնականում զարգացած է Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածաշրջաններում:

Տարածական պլանավորման ոլորտի զարգացման և առաջընթացի համար կարևոր նշանակություն ունեն շրջակա միջավայրի պահպանությանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների կիրառումը, բնության հատուկ պահպանվող տարածքների, պատմության և մշակույթի, դրանց առկայության դպրում, պահպանությունը, տարածքների երկրաբանական և սեյսմիկ պայմանների մասին եզրակացությունների պահանջների կատարումը:

«Արագածոտն-2» տարածքը գտնվում է կիսաանապատային լանդշաֆտային գոտում, խիստ մայրցամաքային կիմայով, ջերմաստիճանի և օդի խոնավության տարեկան և օրեկան մեծ տատանումներով: Այս ամենը չափորոշիչ է քաղաքի կանաչապատման համակարգի ձևավորման և պահպանման համար:

Աշտարակ քաղաքի /բնակավայրի/ տարածքի 56%-ից ավելին զբաղեցնում է սակավահարկ տնամերծ անհատական հողամասերով կառուցապատումը: Տնամերծ հողամասերի շուրջ 60%-ը զբաղեցված են պտղատու այգիներով և բանջարանցներով: Աշտարակ քաղաքի տնամերծ կառուցապատման սահմաններում կանաչապատման տարածքը կազմում է շուրջ 250 հա: Մեկ բնակչին հասնող կանաչ տարածքի բաժինը կազմում է 99.48 քառ.մ/մարդ: Աշտարակում կանաչապատված են նաև հասարակական տարբեր նշանակության կազմակերպությունների հողատարածքները: Հասարակական կառուցապատման կանաչապատ տարածքի գումարը կազմում է շուրջ 50.0 հա: Մեկ բնակչին հասնող կանաչ տարածքի բաժինը կազմում է 19.9 քառ.մ/մարդ:

Գյուղական համայնքներում կանաչապատման հիմնական մասը ընկնում է սահմանափակ օգտագործման կանաչի բաժնին: Գյուղական բնակավայրերում կանաչապատման հիմնական մասը ընկնում է սահմանափակ օգտագործման կանաչի բաժնին, որը տեղակայված է տնամերծ հողամասերում՝ կազմում է հողամասի շուրջ 40%:

Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքները՝ պուրակներն ու զբոսայգիները ներկայացված են խիստ սահմանափակ հատվածներով, քանի որ գյուղերում գրեթե բացակայում են զբոսայգիներն ու պուրակները: «Արագածոտն-2»-ի գյուղերում ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների առավելագույն գումարի չափը կազմում է մոտ 3.4 հա: Մեկ բնակչին հասնող կանաչ տարածքի բաժինը կազմում է 5.6մ<sup>2</sup>/մարդ:

Համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար նախատեսվում է.

- համայնքապետարաններում բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում,

- նախագծերին և ծրագրերին համապատասխան վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում,

- ոռոգման համակարգի զարգացման և բարեկինիման ապահովում:

«Արագածոտն-2» միկրոուղիղնալ տարածքի բնակավայրերում հեռանկարային զարգացման համար հիմնական խթանիչ գործոն են հանդիսանում գործող հզորությունների տեխնոլոգիական գործընթացի արդիականացումը, շրջակա միջավայրի վնասակարության աստիճանի նվազեցումը և էներգախնայող սարքավորանքի կիրառումը, ինչպես նաև բնական ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործումը:



Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 1334,7 տ/տարի: Հիմնականում համայնքներից մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 52,94մլն. դրամ տարի: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը հիմնական IV-V վտանգավորության դասին են:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեջենաների անցուղարձը ցածր է:

Համաձայն նախագծի միկրոռեգիոնի բնակավայրերում աղբավայրեր չկան, հաճախակի է աղբի կուտակումը հենց բնակելի տների բակերում: Բացի դրանից, աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանհիտարական վիճակի վատացմանը: Մարզում կոչտ թափոնների վերամշակման գործարանները բացակայում են: Համայնքները չունեն արդյունաբերական թափոնների համար առանձին աղբավայր: Համայնքներից երեքը (Աշտարակ, Կարբի, Սաղմոսավան) ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչությանը: Հատկացված տարածքը, որը գտնվում է համայնքների վարչական սահմաններում, կենցաղային կոչտ թափոնների տեղափոխման, վնասազերծման, վերամշակման կազմակերպությունների և կառուցների հողամասերի և դրանց սանհիտարական պահպանման գոտիների չափերով չի համապատասխանում գործող նորմերին: Տարածքում կուտակված աղբը մշտապես ենթարկվում է ինքնայրման: Աղբավայր տանող ամբողջ ճանապարհը և մոտակա տարածքը խիստ աղտոտված են, ուստի այդ ժամանակավոր աղբավայրը ենթակա է կոնսերվացման: Նախատեսվում է աղբավայրի համար նախատեսված տարածքը պարսպապատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, կազմակերպել աղբի տեսակավորում, աղբավայրում կատարել պարբերական հողածածկում: Թափոնների ընդհանուր քանակը ներկա իրավիճակում կազմում է 6184տ/տարի:

«Արագածոտն-2» տարածաշրջանի գյուղական համայնքներում տեղակայված են գործող 40 գերեզմանոց, ընդհանուր 58հա տարածքում: Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերին համապատասխան: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը: Նոր գերեզմանոցներ չեն նախատեսվում:

Համաձայն «Արագածոտն-2» տարածաշրջանի գարգացման ծրագրի, բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական և սոցիալական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- երկրորդական և միջայուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,
- բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում և ասֆալտապատում, խաղահրապարակների կառուցում,
- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու կառուցում և բարեկարգում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,



- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
  - հասարակական և արտադրական նշանակության վնասված շինությունների և կառուցների վերականգնում,
  - ճանապարհի եզրերին, ոեկրեացիոն գոտիներում կանաչապատման, ծառատնկման աշխատանքների իրականացում,
  - ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
  - համայնքներում հանգստյան գոտիների ստեղծում,
  - համայնքների տարածքում աղբահանման և տեսակավորման կազմակերպում,
  - ժամանակակից պայմաններին համապատասխան աղբավայրերի և աղբամշակման գործարանների կառուցում,
  - կատարել աղբի տեսակավորում,
  - մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
  - հեղեղապաշտպան անտառատնկումների իրականացում,
  - ասֆալտապատման, ճանապարհինության աշխատանքներ,
  - Աշտարակ քաղաքում եռամսյակը մեկ շրջակա միջավայրի (օդ, ջուր, հող) մոնիթորինգի կազմակերպում,
  - մեքենաների տեխնիկական վիճակի և որակի վրա խիստ վերահսկողության սահմանում, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
  - ամբողջությամբ անցնել գազով և ժամանակակից ջեռուցման տեխնոլոգիաներին,
  - արդյունաբերությունում ներդնել առաջատար տեխնոլոգիաներ:
- Արագածոտնի մարզի գյուղական համայնքների զարգացման հիմնական ուղղություններն են՝

- ճարտարագիտա-ճանապարհային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությունը, բնական և տեխնածին վլտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությունը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովումը, միջիամայնքային ճանապարհների-կապերի վերանայումը և կազմակերպումը,
- հիմնական գործառնական գոտիների վերանայումը և հստակեցումը,
- զբոսաշրջության խթանման և փոքր ու միջին բիզնեսի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծման նպատակով հիմնական միջպետական ուղղություններին և համայնքային կապերին հարակից տարածքներում հատուկ բիզնես գոտիների կազմակերպումը,
- չգագիֆիկացված բոլոր համայնքների գագիֆիկացում,
- գյուղական համայնքներում ոռոգման ջրի ցանցի ընդլայնում,
- բոլոր համայնքներում կոյուղու ցանցերի անցկացում,
- սելավատար առուների կառուցում,
- տնտեսակենցաղային կեղտաջրերի փոքր հզորության մաքրման կայանների կառուցում,
- աղբավայրերի նախատեսում սանիտարական գոտիների պահպանմամբ,
- Աշտարակ քաղաքային և գյուղական համայնքների կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափուների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:



Ընդհանուր առմամբ Արագածոտնի մարզի «Արագածոտն-2» համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համայիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են օարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

**Պատճառաբանական մաս.** Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակատուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված քաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտունորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ, այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունները:

Օրենքով սահմանված կարգով արագածոտնի մարզպատարանում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել փաստաթղթի վերաբերյալ:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

### Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրությաին փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Հիմնադրությաին փաստաթղթով նախատեսվող գյուղատնտեսական, շինարարական և այլ աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած հնարավոր պատմամշակութային և հնագիտական շերտերի առկայության դեպքում անհրաժեշտ է հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացությունը ստանալուց հետո:



- Հիմնադրութային փաստաթղթով նախատեսվող գյուղատնտեսական, շինարարական և այլ աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած Կարմիր Գրքերում գրանցված բույսերի և կենդանիների առանձնյակների, պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ եզրակացությունը ստանալուց հետո:
- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:
- Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի «Արագածոտն-2» միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ուազմավարական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ՝



Ա. Վարդանյան